ԳԼՈՒԽ Է.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՍԷՅՄԸ ԵՒ ՆԵՐՔԻՆ ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բայց ի՞նչ էր ներկայացնում այդ ժամանակ Անդրկովկասը։ Որքա՞ն ընդունակ էր նա դիմադրելու Թիւրքերին։

Տեսանք արդէն, որ նոյեմբ. 27-ին Անդրկ. Առանձին Կոմիտէն փոխարինուեց Անդրկ. Կոմիսարիատով։ Այս փոփոխութիւնը, սակայն, իրական բարելաւում չբերեց։ Ճակատի ու թիկունքի քայքայումը շարունակուեց անարգել՝ միշտ ընդարձակուելով ու խորանալով։ Գրեթէ ամբողջ ժամանակ կառավարութիւնը զբաղուած էր բանակի նահանջի ու մահմետական շարժումների հետ կապուած խնդիրներով, պարենաւորման ու ելևմտական տագնապի դէմ կուելով, պատերազմի հաշուեյարդարին վերաբերող և նման հարցերով։ Կազմակերպական և շինարար աշխատանք կատարելու հնարաւորութիւն չէր մնում։ Միակ «շինարար» աշխատանքը եղաւ անդրկովկասեան բոների հրատարակութիւնը փետրու. 6-ին, որ մասամբ մեղմացրեց դրամական սովը։

Անդրկ. Կոմիսարիատը ներքնապէս էլ ներդաշնակ ու հաշտ չէր։ Ազգային ներհակութիւնները մաշում էին նրա հիմքը։ Իշխանութեան իրական ոյժը աւելի և աւելի տեղափոխւում էր ազգային խորհուրդների մէջ, որոնցից իւրաքանչիւրը իր ազգի շահերն էր պաշտպանում։ Դրան մեծապէս նպաստում էր և կովկասեան ժողովուրդների քաղաքական հակումի՝ օրիէնտացիայի տարբերութիւնը։ Մինչ հայերը և, որոշ չափով, վրացիները համարւում էին հակաթիւրքական կողմ, մահմետականները շեշտուած թիւրքասէրներ էին և Թիւրքիայի գործերը շատ մօտ էին ընդունում իրենց սրտին։ Հակումի ներհակութիւնից առաջ էին գալիս և Անդրկ. Կոմիսարիատի ներսում աճող սուր անհամաձայնութիւնները պատերազմի խնդրում. Կոմիսարիատի մահմետական անդամները ամէն դնով աշխատում էին արագացնել հաշտութիւնը թիւրքերի հետ՝ Թիւրքիայի համար նպաստաւոր պայմաններով, նոյնիսկ Կովկասի շահերին ի վնաս։

Այսպիսի հանգամանքներում գործող մի իշխանութիւն, ի հարկէ, չէր կարող երևան բերել ոյժ ու հեղինակութիւն, իսկ նրա կառավարած երկիրը չէր կարող լինել խաղաղ ու բարգաւաճ։ Եւ, իրօք, երկիրը ներկայացնում էր քաոսային մի վիճակ։

Սէյմի փետրու. 13-ի նիստում Գեգեչկորին այսպէս էր բնորոշում Անդրկովկասի դրութիւնը դեկտեմբեր-յունուար ամիսներին. «Մեր ընդարձակ և բազմացեղ երկրի բոլոր կէտերում, բոլո՛ր շրջաններում առաջ էին գալիս թիւրիմացութիւններ ու բռնութիւններ թէ ազգային հողի վրա և թէ հեռա-